6.qxd 29/03/2026 17:48 Page 1


# ԳԵՂԱՄԱ ՏԱՐԱՀ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 27 մարտի 2026թ. թիվ 6 (634)


## ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՅՍ ՏԱՐԻ ԿՏՐՎԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

2026 թվականին Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում ԿԳՄՍ նախարարության եւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պատվիրատվությամբ կտրվի միջազգային չափորոշիչներին համապատասխան ֆուտբոլի ակադեմիայի եւ մարզական համալիրի կառուցման աշխատանքների մեկնարկը:

Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի տեղեկացմամբ՝ ՀՀ Կառավարության որոշմամբ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գետափնյա 2-րդ փողոց 17/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման, գործառնական նշանակության 1.52 հեկտար մակերեսով հողամասը նախատեսվում է ամրացնել ԿԳՄՍ նախարարությանը՝ սպորտային համալիր կառուցելու նպատակով:

Ծրագիրն իրականացվում է պետությունմասնավոր համագործակցությամբ:

Ծրագրի իրականացման առաջին փուլում նախատեսվում է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներով ԿԳՄՍՆ կողմից շինարարական աշխատանքների, տեխնիկական հսկողության եւ հեղինակային հսկողության գնումների իրականացում, ինչի արդյունքում կկառուցվի սպորտային համալիր:

Առաջին փուլը կիրականացվի 2026 - 2027 թվականներին: Համագործակցությունն իրականացվում է «Հիլլզ» բրենդի ներքո մասնագիտացված

ծառայություն իրականացնող ընկերության հետ:

Ծրագրի իրականացման երկրորդ փուլում նախատեսվում է միջազգային չափանիշներին համապատասխան սպորտային եւ անհրաժեշտ այլ գույքի եւ սարքավորումների ձեռքբերում եւ կառուցված սպորտային համալիրի ամբողջովին կահավորում: Նշված շարժական գույքը ձեռք է բերելու ընկերությունը, որի փաստացի արժեքի 80 տոկոսը կփոխհատուցվի ՀՀ պետական բյուջեից: Ձեռք բերված գույքի 80 տոկոսը կհանդիսանա պետական սեփականություն, 20 տոկոսը՝ ընկերության սեփականություն:

Ծրագրի իրականացումը կնպաստի տարբեր մարզաձեւերով զբաղվողների թվի աճին եւ առողջ ապրելակերպի մշակույթի տարածմանը:

Մարտի 27-ին Մարտունի քաղաքի մարզադաշտի տարածք են այցելել ՀՀ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը, ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանը, ՀՀ Գեղարքունի մարզպետ Կարեն Սարգսյանը, Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը՝ քննարկելու ֆուտբոլի ակադեմիայի կառուցման հետ կապված առաջիկա անելիքները:

Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հավաստմամբ՝ այժմ Մարտուն քաղաքի համար երկու կարեւորագույն կառույցների հետ կապված գործընթացները գտնվում են նախագծման փուլում, ու առկա են բոլոր նախադրյալները, որպեսզի 2026 թվականին երկու ուղղություններում էլ տրվի շինարարական աշխատանքների մեկնարկը:

«Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբի նախագահ Բագրատ Նավոյանի հավաստմամբ՝ «Ալաշկերտ» թիմը պատրաստ կլինի՝ տնային խաղերն անցկացնել Մարտունու մարզադաշտում ճիշտ այն օրը, երբ միջազգային չափորոշիչներին համապատասխան նորակառույց մարզադաշտը պատրաստ կլինի շահագործման:

**Խոսրով Խլղաթյան**

## ԳԱՎԱՌՈՒՄ ՆՇՎԵԼ Է ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի նախաձեռնությամբ եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ արդեն չորրորդ տարին անընդմեջ Գեղարքունիքի մարզում անցկացվող ,Թատերական երկամսյակ մշակութային նախաձեռնության շրջանակում մարտի 27-ին Գավառի Լ. Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքում մեկնարկվել են տոնական արարողությունն ու երկամսյակի հերթական ներկայացման բեմադրությունը:

Միջոցառմանը հրավիրված էին մարզպետի աշխատակազմի, համայնքապետարանների, կրթամշակութային եւ առողջապահական հաստատությունների ներկայացուցիչներ, ուսանողներ, ինչպես նաեւ բազմաթիվ հյուրեր:

Տոնի խորհրդին համահունչ՝ հյուրերը թատրոն մուտք են գործել կարմիր գորգով, հնչել են Հայաստանի Հանրապետության եւ Թատրոնի հիմները: Այնուհետ տեղի է ունեցել մրցանակաբաշխություն թատերական մասնագիտության մի շարք անվանակարգերում:

Մրցանակաբաշխությունը կազմակերպվել է Երեւանի «Էլ-Մար» նորարարական ստեղծագործական արվեստի ինստիտուտի կողմից:

Թատերարվեստի բնագավառում ունեցած

ավանդի եւ Թատրոնի միջազգային օրվա առթիվ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհակալագրերով խրախուսվել են Գեղարքունիքի Լեւոն Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի դերասանական անձնակազմի անդամները:

Շնորհակալագրեր եւ հատուկ մրցանակներ են հանձնվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության, «Էլ-Մար» ինստիտուտի կողմից, իսկ «Սպիտակ կամավորական ռազմահայրենասիրական միություն» հասարակական կազմակերպության կողմից հանձնվել են անվանական կրծքանշաններ:

Մարզում թատերական կյանքի զարգացման, թատրոնի գործունեությանը մշտապես աջակցելու նպատակով Գեղարքունիքի Լեւոն Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի տնօրինության կողմից պատվոգիր է շնորհվել ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին:

Միջոցառման ավարտին բեմադրվել է Հայկ Հակոբյանի «Չմոտենա՛ք ինձ, տիկի՛ն» մեկ գործողությամբ տրագիկոմեդիան՝ ռեժիսոր՝ Արմեն Դալլաքյանի բեմադրությամբ:

## ՆՈՐԱՏՈՒՍԻ ՅՈԹՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՏԵՂԻՆ ԵՎ «ԱՍԼԱՆ-ՂԱՓԼԱՆ» ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Նորատուս գյուղում պահպանված ու մինչ նորագույն ժամանակներ հասած պատմության հուշարձանների ցանկում իրենց բացառիկ տեղն ունեն նաեւ «Յոթնաղբյուր» կոչվող բնակատեղին եւ նրա տարածքում գտնվող «Ասլան-Ղափլան» հուշարձանը:

Այս հնավայրը գտնվում է Նորատուսի արեւմտյան թեւում, Ազատ քաղաքի ավերակների դիմացի արեւելյան կողմում, Երեւան-Վարդենիս ավտոմայրուղու կողքին, դեպի Սեւանա լիճ ընկած հատվածում: Այն, պարզվում է, ոչ միայն հին ու միջին դարերում եղել է սոսկ բնակատեղի, այլ նաեւ՝ պաշտպանական նշանակության բերդ-ամրոց, որը եւ՛ հսկել է Սեւանի ավազան եկող ու գնացող ճանապարհները, եւ՛ պաշտպանել իրեն շրջապատող բնակավայրերը:

Հնավայրի մասին առաջին հիշատակությունը թողել է անվանի հնագետ Գեդեոն Միքայելյանը «Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցները» աշխատության մեջ:

«Ազատ քաղաքից դեպի հարավ-արեւելք, Նորատուս տանող ճանապարհի ձախ կողմում

փռված է միջնադարյան լայնանիստ ավերակ մի հնավայր, որին տեղացիները «Յոթնաղբյուր» անունն են տալիս, կամ էլ՝ «Ասլան-Ղափլան»: Վերջինս կապված է այդ ավերակներից ոչ հեռու գտնվող քարե մահարձանի գազանակերպ գծագրության հետ, որոնք հիշեցնում են վագրի ու առյուծի պատկերներ:

Այդ բնակատեղին մինչ այժմ դիտվել է, ինչպես Ազատ քաղաքը, իբրեւ սոսկ միջնադարյան մի ավերակ գյուղ, սակայն հետազոտությունները ցույց տվեցին, որ այս գյուղի տակ գտնվում է հնագույն ամրոց-շեն:

Կիկլոպյան միջնաբերդը գտնվում է սարահարթի հյուսիսարեւմտյան վերջավորության վրա, ունենալով անկանոն 350 մետր երկարություն ունեցող պարիսպ, որը ընդգրկում է 3-4 հեկտար տարածություն: Միջնաբերդը բոլոր կողմերից շրջապատված է կացարաններով, որտեղ պարզ երեւում են ծայրամասերի բնակարանների արտաքին պատերի միացումները, որոնցով ամբողջ բնակավայրը ստացել է մի ուրույն պարսպապատում:

**/շարունակությունը՝ էջ 4-ում/**

6.qxd 29/03/2026 17:48 Page 2



## ՍԵՎԱՆՈՒՄ «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ - 2026» ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է 4 ԾՐԱԳԻՐ

ՀՀ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը համաձայնություն եւ հավանություն է տվել Սեւան համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացում քվեարկության արդյունքներով ամենաշատ ձայներ հավաքած եւ հաղթող ճանաչված 4 ծրագրերին:

Ինչպես տեղեկացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից, դրանք են՝ «Առողջ եւ ակտիվ երիտասարդություն» (Գեղամավան բնակավարում երիտասարդական կենտրոնի ստեղծման համար տարածքի վերանորոգում), «Հարմարեցված տրանսպորտային կանգառներ եւ նստարաններ» (Դդմաշեն բնակավայրում տրանսպորտային կանգառների կառուցում եւ նստարանների տեղադրում), «Առողջ միջավայր. բազմաֆունկցիոնալ մարզադաշտ» (Վարսեր բնակավայրում բազմաֆունկցիոնալ մարզադաշտի կառուցում), «Երիտասարդության զբաղվածության կենտրոնի հիմնում» ծրագրերը:

«Հարմարեցված տրանսպորտային կանգառներ եւ նստարաններ» ծրագրի աշխատանքների իրականացման ընդհանուր բյուջեն 16 միլիոն դրամ է, որից 10,7 միլիոն դրամը կհատկացվի ՀՀ պետական բյուջեից, 5,3 միլիոն դրամը՝ Սեւան համայնքի բյուջեից:

«Առողջ եւ ակտիվ երիտասարդություն» ծրագրի աշխատանքների իրականացման ընդհանուր բյուջեն 15 միլիոն դրամ է, որից 9,7 միլիոն դրամը կհատկացվի ՀՀ պետական բյուջեից, 5,3 միլիոն դրամը՝ Սեւան համայնքի բյուջեից:

«Առողջ միջավայր» բազմաֆունկցիոնալ մարզադաշտ ծրագրի աշխատանքների իրականացման ընդհանուր բյուջեն 15 միլիոն դրամ է, որից 9,7 միլիոն դրամը կհատկացվի ՀՀ պետական բյուջեից, 5,3 միլիոն դրամը՝ Սեւան համայնքի բյուջեից: «Երիտասարդության զբաղվածության կենտրոնի հիմնում» ծրագրի աշխատանքների իրականացման ընդհանուր բյուջեն 14 միլիոն դրամ է, որից 9.7 միլիոն դրամը կհատկացվի ՀՀ պետական բյուջեից, 4.3 միլիոն դրամը՝ Սեւան համայնքի բյուջեից: Ծրագիրը կիրականացվի Սեւան քաղաքում:

Բոլոր 4 ծրագրերն էլ կսկսվեն ու կավարտվեն 2026 թվականին:

## ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կարճաղբյուր գյուղի Ա. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերից մեկնարկել եւ ընթանում են վերանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Նունե Ավետիսյանը, դպրոցի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 451 միլիոն 200 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսված է շենքի տանիքի, հատակի, աստիճանների, միջանցքների, դասասենյակների, սանհանգույցների, ջեռուցման, էլեկտրական էներգամատակարարման, ջրամատակարարման համակարգերի, մարզադահլիճի, դահլիճի վերանորոգում, նոր դռների ու լուսամուտների տեղադրում, բացօթյա մինի ֆուտբոլի դաշտի կառուցում, այլ աշխատանքներ:

2026 թվականի մարտի 27-ի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացված են շուրջ 50 տոկոսով:

Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի հունիսին:

## ՇԱՏՎԱՆԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան գյուղում ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում 2025 թվականի հունիսից սկսվել եւ ընթանում են 144 տեղանոց կրթահամալիրի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Շատվանի կրթահամալիրի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 642 միլիոն 149 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից: Կրթահամալիրի կազմում, բացի 144 աշակերտ տեղը, կգործի նաեւ մանկապարտեզ՝ 80 տեղով: 2026 թվականի մարտի 17-ի դրությամբ շինարարությունն իրականացվել է շուրջ 30 տոկոսով: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2027 թվականի մարտ ամսին:

## ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՍԵՎԱՆԻ ԹԻՎ 3 «ՀԵՔԻԱԹ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի թիվ 3 «Հեքիաթ» մանկապարտեզում սկսվել եւ ընթանում են վերանորոգման աշխատանքները: Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Սեւանի «Հեքիաթ» մանկապարտեզի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 162 միլիոն 960 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ծրագրով նախատեսվում է հատակի, պատերի, սանհանգույցների, ջեռուցման, ջրամատակարման, էներգամատակարարման համակարգերի վերանորոգում, նոր դռների եւ լուսամուտների տեղադրում, այլ աշխատանքներ:

Պետական ֆինանսավորմամբ իրականացվող հիմնանորոգումներին զուգահեռ Սեւան համայնքն էլ հայտարարել է մրցույթ «Հեքիաթ» մանկապարտեզի բակային տարածքի բարեկարգման եւ կահավորման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 150 օրացուցային օրվա ընթացքում:

«Հեքիաթ» մանկապարտեզը գործում է 6 խմբով:

## ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՀՀ կառավարության կողմից մշակված գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի վերաբերյալ Գեղարքունիքի մարզի բնակչության շրջանում իրազեկման աշխատանքներ իրականացնելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարի նախաձեռնությամբ եւ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աջակցությամբ նախարարության եւ մարզպետի աշխատակազմի համապատասխան մասնագետները հանդիպումներ են ունենում Գեղարքունիքի մարզի համայնքներում:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, մարտ ամսի ընթացքում հանդիպումներ են կայացել Վարդենիս, Գավառ, Մարտունի եւ Սեւան համայնքներում, որոնց մասնակցել են համայնքապետարանների գյուղատնտեսության ոլորտի մասնագետներ, պատասխանատու աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, ֆերմերներ, գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչներ, գյուղատնտեսության առանձին ճյուղերի զարգացմամբ հետաքրքրված անձինք:

Հանդիպումների ընթացքում էկոնոմիկայի նախարարության եւ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչները հանգամանալից ներկայացրել են ՀՀ կառավարության կողմից իրականացվող գյուղատնտեսության աջակցության ծրագրերի բովանդակությունը, այդ ծրագրերից օգտվելու դեպքում պետության եւ մասնավոր տնտեսությունների անելիքները, ներդրումների պայմանները, խոսել ծրագրերի արդյունավետության մասին եւ պատասխանել ներկաների կողմից բարձրացված հարցերին:

6.qxd 29/03/2026 17:48 Page 3



## ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԱԿՈՒՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք գյուղում շարունակվում են միջնակարգ դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքները, որոնց մեկնարկը տրվել է 2025 թվականի օգոստոս ամսից, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Ակունքի միջնակարգ դպրոցի շենքի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 361 միլիոն 255 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է հատակի, աստիճանների, նորոգում, տանիքի մասնակի նորոգում, պատերի ներքին հարդարում, ջեռուցման, ջրամատակարարման, էներգամատակարարման համակարգերի, սանհանգույցների նորացում, նոր դռների տեղադրում, ցանկապատի ու մարզադաշտի կառուցում, տարածքի բարեկարգում եւ այլ կարգի շինարարական աշխատանքներ:

Շինարարությունը նախատեսվում է ավարտել 2026 թվականի ապրիլին:

Շինարարական աշատանքների ավարտից ու նոր գույքի ձեռքբերումից հետո Ակունքի միջնակարգ դպրոցը կապահովվի արդի չափորոշիչներին համապատասխան բոլոր պայմաններով:

Ակունքի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի եւ դահլիճի կապիտալ նորոգման աշխատանքները սկսվել եւ ավարտվել են 2022-2024 թվականների ընթացքում, պետական ծրագրի շրջանակներում, 220 միլիոն դրամ պայմանագրային արժեքով: Ծրագրի իրականացման արդյունքում արդիականացվել են Ակունքի միջնակարգ դպրոցի մարզադահլիճը եւ նիստերի դահլիճը:

**«Գեղամա աշխարհ»**

## ՍԵՎԱՆՈՒՄ ԱՂԲԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄՆ ԱՐԴԵՆ ԴԱՌՆՈՒՄ Է ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹ

Արդեն բոլորում է 7-րդ ամիսը, ինչ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում աղբահանությունն իրականացվում է «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի կողմից, միաժամանակ էլ աղբի տեսակավորումը դառնում է հիմնավորված մշակույթ:

Սեւան համայնքի բոլոր բնակավայրերում տեղադրվել են նոր թափոնամաններ, աղբահանությունն իրականացվում է սահմանված գրաֆիկի համաձայն:

Աղբահանության ծառայությունները մատուցվում են ժամանակին եւ որակյալ, ինչը ենթադրում է նաեւ բնակիչների պատասխանատու վերաբերմունք՝ սկսած աղբ թափելու մշակույթից մինչեւ վարձավճարների ժամանակին վճարումը:

Աղբահանությունից անցում է կատարվում թափոնների կառավարման, որի մասնակիցն ու հասցեատերը դառնում են Սեւան քաղաքի բոլոր բնակիչներն ու տնտեսվարողները:

Սեւան քաղաքի մի շարք առանձնատների բակային տարածքներում, քաղաքի փողոցներում, բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում, ուսումնական եւ արտադպրոցական հաստատությունների հարակից հատվածներում ավելացել են նաեւ կապույտ եւ կանաչ թափոնամանները, որոնք հուշում են, որ սեւանցիներն օգոստոս ամսից տեսակավորում են թափոնները:

Սեւան քաղաքում սկզբնաղբյուրում կոշտ կենցաղային թափոնների տեսակավորման նոր համակարգը կյանքի է կոչվել Շվեդիայի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի կողմից, եւ իրականացնում է Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության եւ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ:

Շուրջ 300000 եվրոյին համարժեք դրամի աջակցության շրջանակում Սեւանին նվիրաբերվել է եվրոպական արտադրության 1680 թափոնաման եւ մեկ թափոնատար մեքենա:

Տեսակավորված աղբը սանիտարական աղբավայր է տեղափոխվում «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի միջոցով, որին համայնքը արտապատվիրակել է տեսակավորված աղբի հավաքման եւ տեղափոխման ողջ գործընթացը:

Սեւանում ձեւավորվում է նոր մշակույթ աղբահանության ոլորտում, ու անչափ կարեւոր է յուրաքանչյուրիս վերաբերմունքն ու մոտեցումը նոր մշակույթի որդեգրման ճանապարհին:

**Արմինե Ղուկասյան**

## ԿԱՅԱՑԵԼ Է ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 9-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԸ

Մարտի 12-ին կայացել է Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի ավագանու 9-րդ նստաշրջանի 2-րդ նիստը, որը վարել է համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի հաստատումից հետո դրանք ներկայացվել են Սեւան համայնքի ղեկավարի եւ ոլորտային պատասխանատուների կողմից:

Սեւան համայնքի ավագանին հաստատել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2026 թվականի ամենամյա ծրագիրը, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին»N 148-ն որոշման մեջ կատարված փոփոխությունները, Սեւան համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանի լրամշակված տարբերակը: Համայնքի ավագանին ի գիտություն է ընդունել Սեւան համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի արդյունքում ընտրված առաջարկները:

Համապատասխան որոշումներով սահմանվել են Սեւան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով վաճառքի մեկնարկային գները, հաստատվել Սեւան համայնքի կողմից 2026 թվականի հունվար-փետրվար ամիսներին համայնքային սեփականություն հանդիսացող օտարված գույքի գույքագրման փաստաթղթերը:

Ներկայացված մյուս հարցերը եւս համապատասխան որոշումներով հաստատվել են քվեարկությամբ:

Ավագանու նիստի ընթացքում քննարկվել են համայնքի ավագանուն հասցեագրված դիմումները, զեկուցագրերը, որոնց մի մասն ստացել է սպառիչ պատասխան, որոշ դիմումներ էլ լրացուցիչ կքննարկվեն խմբակցություններում:

**Արմինե Ղուկասյան**

## ԿԱՅԱՑԵԼ Է ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԸ

Մարտի 12-ին կայացել է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու 10-րդ նստաշրջանի երկրորդ նիստը, որը վարել է համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը:

Նիստի օրակարգում քննարկվող երկու տասնյակ հարցերը հաստատվել են ավագանու քվերակությամբ: Քննարկվել են «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու եւ համայնքի բյուջեից փոխհատուցում տրամադրելու», «Համայնքային սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցները աճուրդային կարգով օտարելու», «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերը աճուրդային կարգով օտարելու», «Համայնքային սեփականություն հանդիսացող պահեստը եւ սպասարկման համար հատկացված հողատարածքը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու» հետ կապված հարցերը:

Քննարկվել են նաեւ քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները եւ մի շարք այլ հարցեր:

**Ալվարդ Մանուկյան**

## ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծովագյուղ բնակավայրում ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում արդեն մեկնարկել եւ ընթանում են մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից, Ծովագյուղի մանկապարտեզի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 171 միլիոն 240 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է հատակի, պատերի, աստիճանների, ջեռուցման, ջրամատակարարման, էներգամատակարարման համակարգերի, սանհանգույցների վերանորոգում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, այլ աշխատանքներ:

Սեւան համայնքն էլ հայտարարել է մրցույթ՝ մանկապարտեզի բակային տարածքների բարեկարգման եւ կահավորման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 150 օրացուցային օրվա ընթացքում:

**«Գեղամա աշխարհ»**

6.qxd 29/03/2026 17:48 Page 4



# ՆՈՐԱՏՈՒՍԻ ՅՈԹՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՏԵՂԻՆ ԵՎ «ԱՍԼԱՆ-ՂԱՓԼԱՆ» ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Ասլան-Ղափլան տապանաքարը՝ արաբատառ արձանագրությամբ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Սարահարթը, որի վրա կառուցված է միջնաբերդը, արեմտյան, արեւելյան ու հյուսիսային կողմերից դժվարամատչելի է, ունի խիստ թեք լանջեր, որոնք շրջապատից բարձր են 25-30 մետր, իսկ հարավային ու հարավարեւելյան կողմերով լանջերն աստիճանաբար իջնում են եւ միաձուլվում դաշտի ընդհանուր մակերեւույթին:

Միջնաբերդն ունի մուտք՝ դարձված դեպի հյուսիս, որտեղից ճանապարհը դուրս գալով թեքվում է դեպի արեւմուտք եւ ապա հարավ ու կորչում բնակավայրում: Միջնաբերդն ունեցել է երեք աշտարակ, որոնցից երկուսը գտնվում են պարսպի արեւելյան հատվածում, իսկ մեկը՝ արեւմտյան: Նրանք ունեցել են 5*5 մետր հարթակ, սակայն նրանց բարձրության մասին դժվար է որեւէ բան կռահել:

Միջնաբերդից դեպի հյուսիս եւ հյուսիս-արեւելք, լճի մակարդակի իջնելուց հետո, հարթության վրա երեւում են հնագույն կացարանների հետքեր, իսկ այդ ավերակներից այն կողմ նշմարվում են մի քանի բավականին խոշոր դամբարաններ:

Այս ամրոց-շենում ջրի մատակարարման հարցը, ըստ երեւույթին, լուծված է եղել: Ջուրը վերցրել են «Յոթն աղբյուրներից», որոնք գոյություն ունեին մի քանի տասնյակ տարի առաջ: Այժմ աղբյուրները ցամաքել են լճի մակարդակի իջնելու պատճառով»,-գրում է Գեդեոն Միքայելյանը:

Անշուշտ, այս հնավայրը մինչ այժմ մեր պատմագրության ու հնագիտական մտքի պատմության մեջ գրեթե ուսումնասիրված չէ՝ չհաշված Գեդեոն Միքայելյանի կողմից կատարված արտաքին ուսումնասիրությունը: Ընդ որում, թե՛ «Յոթնաղբյուրի», թե՛ «Ասլան-Ղափլան» տապանաքար-հուշարձանի մասին խոսք անգամ չկա 2000 թվականին հրատարակված «Նորատուս» փաստագրական ու հանրագիտարանային նշանակության գրքում: Մինչդեռ այստեղ ոչ միայն աշխարհիկ, այլ նաեւ հոգեւոր շինությունների հետքեր են նկատվում՝ որոշակիորեն պահպանված պատերով, որոնք, տեղ-տեղ հողածածկ վիճակում, տարածվում են մի քանի հեկտարի վրա: Ու չի բացառվում, որ մենք գործ ունենք հերթական բազմաշերտ հուշարձանի հետ, ուր մարդկային կյանքն առանց ընդհատումների շարունակվել է հազարամյակների ընթացքում:

Հուշարձանի դրոնային լուսանկարները մեզ տրամադրեց հնագետ Լեւոն Մկրտչյանը, ում հետ վերջին երկու տարիներին այցեցել ենք «Յոթնաղբյուրի» տարածք ու կատարել վերգետնյա զննումներ եւ ուսումնասիրություններ:

Այս բնակավայրը ոչ միայն գտնվել է քարավանային ճանապարհների հանգույցում, այլ նաեւ Սեւանա լճին ու Գեղամա լեռների արոտավայրերին շատ մոտիկ, ինչը եւ բնիկներին հնարավորություն է տվել՝ զբաղվելու անասնապահությամբ, երկրագործությամբ, ձկնորսությամբ, առեւտրով ու զանազան արհեստներով:

Դժվար է առայժմ ասել, թե երբ ու ինչ հանգամանքներում է վերջնականապես լքվել բնակավայրը, բայց մի բան պարզ է, որ անանուն այս բնակավայրի ու բերդ ամրոցի ուժն ու ամրությունը շատ հաճախակի են փորձել օտար նվաճողներն՝ իրենց բազմամարդ ու ավարառու բանակների հետ: Պարզ է նաեւ, որ տեղաբնիկների ու թշնամի զորքերի միջեւ տեղի են ունեցել արյունալի բախումներ, գերեվարություն, բնակչության հարկադրված տեղաշարժեր: Այդ արշավանքներից մեկի արդյունքն էլ հենց եղել է այն հսկա տապանաքարը, որը գտնվում է «Յոթնաղբյուրի» ավերակների հարավային եզրում: Տապանաքարն ունի 2, 77 մետր երկարություն, 1 մետր լայնություն, 1, 01 մետր բարձրություն: Այն տեղ-տեղ մամռապատ է: Տապանաքարն արվեստի արժեքավոր գործերից է, աչքի է ընկնում ինքնատիպ քանդակներով՝ երկու կողմերում հսկա վիշապօձի, այլ կենդանիների քանդակներով: Սակայն շատ ավելի ուշագրավ ու արժեքավոր է տապանաքարի վրա պահպանված արաբատառ արձանագրությունը, որը շատ կարեւոր տեղեկություն է հաղորդում Հայաստանի 13-14-րդ դարերի քաղաքական պատմությունն ուսումնասիրելու, հայ-մոնղոլական հարաբերությունների անհայտ էջերը պարզաբանելու տեսանկյունից:

Տապանաքարն առաջին անգամ ուսումնասիրել է ադրբեջանցի վիմագրագետ Մ. Նեյմատովան, եւ նրա արձանագրությունը թերի ընթերցմամբ հրատարակել է 1981 թվականին, Բաքվում:

Սակայն հետագայում, հայ հնագետ Ալեքսան Խաչատրյանի ջանքներով պարզվում է, որ այս հուշարձանը որեւէ աղերս չունի ադրեջանաթյուրքական մշակույթի հետ: Վիմագիր տեքստի երկրորդ եւ ամբողջական վերծանությունը Ալեքսան Խաչատրյանի կողմից հրատարակվել է Երեւանում, 1987 թվականին: Տեղական ավանդույթի համաձայն, այս եւ կողքի անարձանագիր տապանաքարերը պատկանում են ռազմի դաշտում զոհված Ասլան ու Ղափլան եղբայրներին, որտեղից էլ գալիս է հնավայրի եւ տապանաքարի «Ասլան-Ղափլան» ժողովրդական անվանումը:

Եվ այսպես, արձանագրութունը վկայում է, որ այն Սաադ ադ-դին բ. Սեյֆ ադ-դին էմիրի տապանաքարն է եւ թվագրված է 1305 թվականով՝Հայաստանում մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում: Վիմագիրը սկսվում է Ղուրանից վերցված ընդարձակ հատվածով, որը ձոն է առ Աստված, ապա գալիս է բուն հիշատակագրությունը. «Այս է տապան ամենաբարձրյալ Ալլահի ողորմածությանը հասած հանգուցյալ տառապյալի՝ փառապանծ, մեծ Սաադ ադ-դին բ. (իբն) Սեյֆ ադ-դին էմիրի: Մահացել է Հիջրայի 704 թ. Ռամադան ամսի՝ երկուշաբթի օրը (28.03-27.04.1305 թ.)»:

Սույն արձանագրությունը մոնղոլական տիրակալի մասին մեզ հայտնի միակ գրավոր սկզբնաղբյուրն է: Ամենայն հավանականությամբ, էմիրը եղել է մոնղոլական իշխանության ներկայացուցիչը Գեղարքունյաց գավառում եւ կառավարել է 13-14-րդ դարերի սահմանագլխին: Տապանաքարը համարվում է դեկորատիվ կիրառական արվեստի մաս: Այն խոշոր է, բարձրիկ, ուղղանկյունաձեւ ու պատկերազարդ: Քանդակազարդ են ներքեւից երկրորդ շարքի ուղղահայաց նիստերը, որտեղ պատկերված են վիշապամարտի տեսարաններ, այծերի ու անթամբ նժույգի բարձրաքանդակներ: Վերին՝ հորիզոնական, նիստը անզարդ է ու անարձանագիր: Արաբատառ թվակիր արձանագրությունը մեկ տողով, կոպիտ նասխ գրչությամբ շուրջանակի փորագրված է տապանաքարի վերնամասի (վերեւից երրորդ ուղղահայաց նիստի) եզրերով:

Դժվար է կռահել՝ մոնղոլ տիրակալն արդյո՞ք իր համար իշխանանիստ բնակավայր է ընտրել Նորատուսին մոտիկ այս շեն-ամրոցը, թե ընկել է ճակատամարտում: Սակայն, ամեն դեպքում, մոնղոլը եղել է նվաճող ու տիրակալ իշխանը, բայց քանդակն ու արվեստի այդ մնայուն գործը կերտվել են Հայաստանում, հայ վարպետի ձեռամբ ու մտահղացմամբ, ուստի այս հուշարձանը ոչ մի կերպ չի կարող համարվել մոնղոլական մշակույթի մաս: Բացի արձանագրությունը, որն արաբատառ է, այն իր ոճի մեջ բացառապես հայկական է, որը գալիս է հայկական կիրառական արվեստի ու քանդակագործության ամենահեռավոր ակունքներից:

Հետաքրքիրն այն է, որ այս տապանաքարի գրեթե կրկնօրինակը գտնվում է Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում, գրեթե նույն չափսերի ու զարդամոտիվների մեջ, միայն այն տարբերությամբ, որ միջնադարյան այս հուշարձանը կրում է ոչ թե արաբատառ, այլ՝ հայատառ արձանագրություն: Առավել հետաքրքիրն այն է, որ այս տապանաքարի մասին իր երկերում հիշատակություն է թողել հայ ականավոր հնագետ, ազգագրագետ Երվանդ Լալայանը՝ անգամ մեջ բերելով հայատառ արձանագրության բովանդակությունը:

«Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցին պարսպապատ է, որի մեջը եւ շուրջը կան բավականաչափ խաչարձաններ եւ հասարակ տապանաքարեր: Ամենից ավելի ուշագրավ է մի տապանաքար, 3 մետր երկարությամբ, 76 սանտիմետր լայնությամբ 1,08 մետր հաստությամբ: Սրա երեսին նկարված է մի գավազան, որի երկու կողմը գրված է. «Ես մելիք Ոհկես տապանս շինեցի հօր իմում մելիք Պարէքին»: Այս արձանագրության վերեւ քանդակված է մի ռնգեղջյուր, որ կռվում է յուր վրա ցատկած վագրի հետ, իսկ ներքեւում՝ մի եղջերու՝ ոտների տակ մի վիշապ»: Այս տապանաքարի արեւմտյան կողմը կանգնեցված է մի մի խաչքար, որի ճակատին գրված է. «Կամավն Աստծոյ, ես Մելիք Բարէքս կանգնեցի զխաչս վասն փրկութեան հոգվոյ իմոյ: Մելիքսեթ կամզող. Բարէքին է խաչս»: Իսկ խաչքարի թիկունքին գրված է. «Կամավն Աստծո, ես, մելիք Բարէքս, եղբայրն իմ Ստեփանոս քահանէն, որդին իմ Գունկչայ բեկն, հայրն իմ Գունդուզ աղեն, եկինք Գանձակայ, շինեցինք կարմունճս, շինեցինք շրջապատս, կանգնեցինք զխաչերս, որք երկրպագէք, յիշեցեք ի Քրիստոս»,-վկայում է Երվանդ Լալայանը:

Սույն արձանագրության հավաստումը Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում պահպանված խոշոր տապանաքարի վրա չկարողացանք նկատել՝ հուշարձանի՝ չափից դուրս մամռակալած լինելու պատճառով: Բայց ուշադիր նայելիս մամուռի պատվածքի ներքո նկատվում են վիշապօձի ու այլ տարրերի քանդակները:

Նորատուսի տարածքով մեկ սփռված հազարից ավելի գեղաքանդակ խաչքար-տապանաքարերն ի լուր աշխարհի աներկբա փաստում են արվեստի այս սքանչելի կոթողների հայկականությունը, որոնց կողքին էլ անխոս պիտի դասվեն «Յոթնաղբյուր» բնակավայրի տարածքում պահպանված «Ասլան-Ղափլան» հուշարձան-տապանաքարը եւ նրա հարեւանությամբ գտնվող մեկ այլ, չափսերով համամատաբար փոքր, գեղաքանդակ ու անարձանագիր տապանաքարը:

Վիշապօձի պաշտամունքն ու խորհուրդը հայկական դիցաբանության, ժողովրդական բանահյուսության, գեղանկարչության, քանդակագործության ու զարդարվեստի պատմության մեջ գալիս է անհիշելի ժամանակներից՝ փոխանցվելով սերնդից սերունդ ու պահպանելով իր գեղագիտական, գեղարվեստական կիրառական նշանակությունը:

Այս մասին վկայում է հայ պատմաբան, բանասեր եւ արվեստագետ Ասատուր Մնացականյանը: «Հայ ժողովրդի եւ նրա նախնիների հեռավոր անցյալում, որպես տոտեմ, մեծ տեղ են գտել նաեւ վիշապօձերը: Ուստի եւ մեր զարդարվեստում հանդիպող վիշապօձերի մի մասը կապված է այդ պատկերացումների հետ...Հայ ժողովրդի դիցաբանության, զարդարվեստի պատկերացումների մեջ, որպես չար ու թշնամի ուժերի իշխող մարմնացում, նույնպես երեւան են գալիս վիշապօձերը: Գլխավոր հատկանիշը, որով հնարավոր է տարբերել բարի վիշապօձերին թշնամի, չար օձերից, հետեւյալն է. եթե այդ էակները պատկերված են ծնող զույգերով, կենաց ծառերով, առանձին, ապա դրանք բարի են: Իսկ եթե հանդիպում են զանազան կենդանիների ու մարդկանց դեմ կռվելիս, կենաց ծառերը կլանելիս, ապա դրանք չար ուժերի մարմնացում են»,- իր հեղինակած «Հայկական զարդարվեստ» գրքում նկարագրում է Ասատուր Մնացականյանը:

Հնագետ, պատմաբան Լեւոն Մկրտչյանի կարծիքով՝ թե՛ «Յոթնաղբյուրը», թե «Ասլան-Ղափլանը» գիտական լուրջ ուսումնասիրման կարիք ունեն, որի դեպքում մենք կարող ենք գործ ունենալ մեր ժողովրդի պատմության համար անչափ կարեւոր նոր բացահայտումների հետ:

**Խոսրով Խլղաթյան**

Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակի տապանաքարը

6.qxd 29/03/2026 17:48 Page 5



# «ՏԱՂԱՐԱՆԸ» ԴԱՐՁԱՎ 45 ՏԱՐԵԿԱՆ

2026 թվականը հոբելյանական է «Տաղարան» հնագույն երաժշտության անսամբլի համար, որն այս տարի տոնում է իր 45-ամյակը՝ գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սեդրակ Երկանյանի ղեկավարությամբ:

Մոտ կեսդարյա պատմություն կերտած այս բացառիկ անսամբլը, իր տաճարային երաժշտությամբ, անտարբեր չի թողնում անգամ ամենաբծախնդիր հանդիսատեսին: Յուրաքանչյուր համերգի «Տաղարանը» ներկայանում է նոր շնչով, ժամանակին համընթաց՝ ակադեմիական բեմահարթակից հնչեցնելով 5-15-րդ դարերի հայ ազգային մշակույթի բացառիկ արժեքներ՝ շարականներ , տաղեր, հոգեւոր ու աշխարհիկ գոհարներ ու համաշխարհային հնագույն երաժշտություն:

«Տաղարանը» 45 տարիների անբասիր աշխատանքային գործունեությամբ, ազգային ու համամարդկային մշակութային ժառանգությունը պահում, պահպանում, հանրայնացնում ու փոխանցում է սերունդներին: Անգնահատելի է անսամբլի դերը մերօրյա մշակութային պատմության կերտման, կայացման, հայի ու ազգայինի դաստիարակման գործում: 2026 թվականի յուրաքանչյուր համերգ սպասված տոնակատարություն է լինելու հանդիսատեսի համար՝իր ուրույն ձեռագրով ապահովելով մշակութային հրավառություն:

Իսկ արեւագալի պես շողշողուն սկիզբը եղավ 1981թվականին, երբ Գրիգոր Դանիելյանը, նույն ինքը, Դանիել Երաժիշտը , հիմնեց ,Շարականե հնագույն երաժշտության անսամբլը՝ ղեկավարելով այն մինչեւ 1985 թվականը: Անսամբլի անվանումը հուշել է իր ուսուցիչը՝ երաժշտագետ Ռոբերտ Աթայանը: Մաեստրոն առաջնորդվել է այն գաղափարով, որ եթե 200-300 տարվա մշակութային պատմություն ունեցող երկրները կարող են հնագույն երաժշտության անսամբլներ ունենալ , ապա հազարամյակների պատմություն ու մշակույթ ունեցող հայ ազգը աներկբայորեն պետք է ունենա իր հնագույն երաժշտական ստեղծագործությունները պրոֆեսիոնալ կատարմամբ ներկայացնող եւ ավետող անսամբլ:

1985 թվականին «Մելոդիա» ֆիրմայի կողմից `Արամ Խաչատրյան համերգասրահում, տեղի է ունենում «Շարական» անսամբլի ձայնագրությունը: 1986 թվականին թողարկվում է «Շարական» հնագույն երաժշտության անսամբլի ձայնասկավառակը:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն, խորապես կարեւորելով անսամբլի տեղը եւ դերը, որոշում է կայացնում՝ անսամբլն ընդգրկել եկեղեցական միջոցառումների շարքում՝ տալով իր օրհնությունն ու բարեմաղթանքը: Կոմունիստական կուսակցության ղեկավարության առաջարկով հնագույն երաժշտության «Շարական» անսամբլը անվանակոչվել է «Տաղարան», քանի որ անվանումն ուներ կրոնական ու հոգեւոր բնույթ:

«Տաղարան»-ի առաքելությունն ի սկզբանե եղել է՝ վեր հանել ու հանրահռչակել մեր ժողովրդի հնագույն երաժշտությունը: 1987 թվականին «Տաղարան» հնագույն երաժշտության անսամբլի ղեկավարությունը ստանձնում է կոմպոզիտոր Երվանդ Երկանյանը: 1988 թվականին «Տաղարանը» ստացել է պետական կարգավիճակ: Այս տարիներին անսամբլը ծաղկունք ապրեց, ներկայացավ այլ հարթության բարձունքից՝ հաղորդելով նոր շունչ ու որակ: Երվանդ Երկանյանը «Տաղարանի» համար մշակել է 350- ից ավելի հայ հոգեւոր, ժողովրդական, ազգային, հայրենասիրական ստեղծագործություններ, որոնք առանձնանում են բարձրաճաշակ, երկանյանական հոգու նուրբ ձեռագրով: Երվանդ Երկանյանի մշակումները առանձնահատուկ են հայ հոգեւոր երգարվեստի ոճի ճշգրիտ ըմբռնմամբ, կոմպոզիտորական բարձր վարպետությամբ:

Այդ տարիներին «Տաղարանը» առաջին անգամ հանդիսատեսին է ներկայացրել Կլաուդիո Մոնտեվերդիի «Պոպեայի թագադրություն», Քրիստոֆ Գլյուկի «Օրփեոս եւ Էվրիդիկե» եւ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերաները՝ համերգային ձեւաչափով: Երվանդ Երկանյանի ղեկավարության օրոք, 1990 թվականին, «Մելոդիա» ֆիրմայի կողմից Մոսկվայում ,Տաղարանը ձայնագրվում ու թողարկում է ձայնասկավառակ:

1994 թվականից անսամբլը ղեկավարում է լավագույն մաեստրոներից մեկը՝ դաշնակահար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սեդրակ Երկանյանը, ով ոչ միայն պահում է անզուգական ու մաքրամաքուր բարձր արվեստ ներկայացնելու իր առաքելությունը, այլ նաեւ բեմ է բարձրացնում այնպիսի գոհարներ, որոնց մշակումներն ու գործիքավորումները տասնամյակներ շարունակ ունկնդրին ուղեկցում եւ տեղափոխում են երաժշտության տիեզերական աշխարհ:

Մաեստրո Սեդրակ Երկանյանի ձեռամբ «Տաղարանը» հսկայական գործունեություն է ծավալում՝ ներակայացնելով հայ հոգեւոր միջնադարյան երաժշտությունից մինչեւ եվրոպական մինչդասական ու բարոկկո շրջանի երաժշտություն: Հայ մշակութային գանձերին զուգահեռ հնչում է նեգրական սպիրիչուելներ, իսպանական , ֆրանսական, իտալական , գերմանական, չինական հնագույն երաժշտության ամբողջական պատկերներ:

«Տաղարանը», լինելով միակը, գրեթե կես դար երաժշտական ոճային առանձնահատկությունով, բարձր վարպետությամբ, մենակատարների ու նվագախմբի համահունչ ներդաշնակությամբ, միշտ բարձրակետում է: Այս անսամբլը ակադեմիական բեմից, ակադեմիական հնչողությամբ ճշմարիտ արվեստով կրթում ու դաստիարակում է որակյալ հասարակություն: Հիրավի, անսամբլի առաքելությունը մեր օրերում բարդ է, բայց Սեդրակ Երկանյան մաեստրոն գիտի, որ յուրաքանչյուր ճշմարիտ արվեստագետ ինքն է իր ուղին հարթում, հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ՝ ի շահ «Տաղարանի»:

Մաեստրոն, հավատարիմ մնալով իր գենետիկ կոդին, Կոմիտասյան ուղենիշը այցեքարտ դարձրած, կերտում է «Տաղարանի» իր ղեկավարության եռահատորը: Նա քարտեզագրել, մշակել ու «Տաղարանի» երկացանկը հարստացրել է հորովելների, քոչարիների, հայկական խճանկարների, հարսանեկան հայտնի ու անհայտ երգերի ու պարեղանակների շարքերով:

Անսամբլը ներկայացրել է «Կարոս խաչ» վիպերգությունը եւ Հովհաննես Թումանյանի հեքիաթների հիման վրա գրված «Վարք հիմարաց» խաղերգությունը (կոմպոզիտոր՝ Դ. Սաքոյան ):

«Տաղարան» հնագույն երաժշտության անսամբլն իր 45 տարիների կարեւոր ու բեղմնավոր գործունեության ընթացքում մասնակցել է մի շարք միջազգային փառատոների, հայտնի ստուդիաների կողմից ձայնագրվել՝ թողարկելով ձայնասկավառակներ, նկարահանել տեսահոլովակներ, մշտապես արժանացել հեղինակավոր հեռուստա եւ ռադիո ծրագրերի ուշադրությանը, միջազգային ու տեղական մամուլի անդրադարձների: Անսամբլը համերգային ծրագրերով հանդես է եկել աշխարհի բազմաթիվ երկրներում՝ ներկայացնելով հայկական մշակույթը, բարձր հնչեցնելով Հայաստան անունը:

**Մարիաննա Գեւորգյան**

## ԳՅՈՒՄՐԻԻ ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքը Կանանց տոնի միամսյակի շրջանակներում հյուրընկալել է Գյումրիի Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասաններին:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Գյումրիի պետթատրոնի կոլեկտիվը Մարտունի քաղաքի մշակույթի տան բեմում հանդես է եկել «Փարիզը վտանգավոր քաղաք է» կատակերգությամբ:

Միջոցառման մեկնարկին համայնքապետարանի կողմից հրավիրված կին հանդիսատեսները ստացել են ծաղիկներ, իսկ առանձնակի շնորհավորանքներով մեծարվել են հայրենիքի պաշտպանության համար հավերժացած հերոսների ընտանիքների կին ներկայացուցիչները:

Տոնական երեկոյի ընթացքում ելույթ է ունեցել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանը՝ կարեւորելով կնոջ կենսական դերը հասարակության մեջ, եւ ներկաներին է փոխանցել համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը:

-Թատերախմբի դերասանները փայլուն խաղով գրավեցին ներկաների սրտերը: Երեկոն եզրափակվեց մեր համերկրացի Արեգ Գալստյանի գեղագիտական կատարումներով:

Միջոցառմանը ներկա էին մանկավարժներ, բուժաշխատողներ, ՀՈԱԿ-ների ներկայացուցիչներ եւ բազմաթիվ հյուրեր, ովքեր տոնականաև օրվանից բաժանվեցին ջերմ ու հաճելի տպավորություններով,-ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

**«Գեղամա աշխարհ»**

6.qxd 29/03/2026 17:48 Page 6



## ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԼԻԳԱՅԻ» ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՆՎԱՃԱԾ ԹԻՄԵՐԸ

Գեղարքունիքի մարզում ավարտվել են «Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղերի համայնքային փուլի մրցումները, որոնց արդյունքում արդեն հայտնի են դարձել մարզային փուլի մասնակցության իրավունք ձեռք բերած թիմերը:

«Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղերի համայնքային փուլին հայտագրվել էին 54 հանրակրթական դպրոցների 77 թիմեր:

Խաղերն անցկացվում են 2 տարիքային խմբով, 1-ին տարիքային խմբում ընդգրկվել են 5-6-րդ, իսկ 2-րդ տարիքային խմբում՝ 7-9-րդ դասարանների աշակերտները: Խաղի ընթացքում դաշտում միաժամանակ գտնվել են 3 տղա, 2 աղջիկ կամ 2 տղա, 3 աղջիկ: Յուրաքանչյուր խաղին թիմի կազմում հայտագրվել են 9 աշակերտ:

Կայացած համայնքային փուլի մրցումների արդյունքում Մարտունի համայնքում 1-ին տարիքային խմբում մարզային փուլի մասնակցության իրավունք է ստացել Վերին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի թիմը, իսկ 2-րդ տարիքային խմբում՝ Մարտունու Ս. Դարբինյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի թիմը:

Ճամբարակ համայնքում 1-ին տարիքային խմբում մարզային փուլի մասնակցության իրավունք է ստացել Ճամբարակի թիվ 1 հիմնական դպրոցի թիմը, իսկ 2-րդ տարիքային խմբում՝ Վահանի միջնակարգ դպրոցի թիմը:

Սեւան համայնքից երկու տարիքային խմբի մրցումներում ուժեղագույնը ճանաչվել են Սեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի թիմերը:

Վարդենիսից երկու տարիքային խմբերում էլ ուժեղագույնը Վարդենիսի էդ. Պողոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի թիմերն են:

Գավառ համայնքում 1-ին տարիքային խմբում հաղթող է ճանաչվել Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը, 2-րդ տարիքային խմբում՝ Գավառի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի թիմը:

Մարզական խաղերի կանոնակագի համաձայն՝ համայնքային փուլում առաջին եւ երկրորդ տեղեր գրաված թիմերն իրենց ուժերը կչափեն մարզային փուլի մրցումներում:

Մարզային փուլի խաղերը կկայանան 2026 թվականի մարտի վերջին օրերին:

Մարզային փուլի յուրաքանչյուր տարիքային խմբում առաջին տեղ գրաված թիմը Գեղարքունիքի մարզը կներկայացնի մարզական խաղերի եզրափակիչ փուլում, որը կանցկացվի ապրիլի 12-18-ը, Երեւան քաղաքում:

**Գեղամ Չարվադարյան**

## ԶՈՐՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՑԱՇԱՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան, Մարտունի, Ճամբարակ եւ Գավառ համայնքներում կայացել են «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի 2-րդ տարիքային՝ 10-12-րդ դասարանների դպրոցների հավաքական թիմերի մրցաշարը:

Մրցաշարն անցկացվում է համայնքային, մարզային եւ եզրափակիչ փուլերով ու 2 տարիքային խմբով: 1-ին տարիքային խմբում ընդգրկված են 5-9, 2-րդ տարիքային խմբում՝ 10-12-րդ դասարանների աշակերտները: Թիմերի կազմերում ընդգրկված են 2 տղա եւ երկու աղջիկ: Գեղարքունիքի մարզում համայնքային փուլին հայտագրվել են 60 հանրակրթական դպրոցների 88 թիմեր:

Սեւան համայնքում անցկացված մրցաշարում 1-ին տարիքային խմբում 1-ին տեղը գրավել է Գագարինի միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ տեղը զբաղեցրել է Լճաշենի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Դդմաշենի միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ տարիքային խմբում 1-ին տեղը գրավել է Սեւանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոցի թիմը: 2-րդ տեղը զբաղեցրել է Դդմաշենի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Զովաբերի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոցի թիմը:

Մարտունի համայնքում 1-ին տարիքային խմբում հաղթող է ճանաչվել Մարտունի քաղաքի Ս. Դարբինյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի թիմը: 2-րդ տեղը զբաղեցրել է Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Ծակքարի միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ տարիքային խմբում հաղթող է ճանաչվել Ծակքարի միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ տեղը գրավել է Վերին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցի թիմը:

Գավառ համայնքում 1-ին տարիքային խմբում հաղթող է ճանաչվել Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ ու երրորդ տեղերը համապատասխանաբար գրավել են Գավառի թիվ 3 հիմնական ու Լճափի միջնակարգ դպրոցների թիմերը: 2-րդ տարիքային խմբում 1-ի տեղը գրավել է Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ եւ 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավել են Գավառի ավագ եւ Լանջաղբյուրի միջնակարգ դպրոցների թիմերը:

Ճամբարակ համայնքում 1-ին տարիքային խմբում 1-ին տեղը գրավել է Աղբերքի միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ ու 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավել են Ճամբարակի թիվ 4 եւ թիվ 2 հիմնական դպրոցների թիմերը:

2-րդ տարիքային խմբում 1-ին տեղը գրավել է Ճամբարակի ավագ դպրոցի թիմը: 2-րդ եւ 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավել են Թթուջրի եւ Աղբերքի միջնակարգ դպրոցների թիմերը:

Հաղթող թիմերը պարգեւատրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Հասմիկ Ավագյանի կողմից տրամադրված հավաստագրերով: 1-ին, 2-րդ , 3-րդ տեղ գրաված հավաքական թիմերը կմասնակցեն մարզային փուլի մրցումներին:

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝ «ՈՒՐԱԽ ԵՎ ՏԽՈՒՐ ՇԻՐԱԶԸ» ԹԵՄԱՅՈՎ

Գեղարքունիքի մարզի Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N1 հիմնական դպրոցի 7-րդ «ա» եւ 7-րդ «բ» դասարաններում իրականացվել է «Ուրախ եւ տխուր Շիրազը» խորագրով ուսումնական նախագիծ, որը ղեկավարել է հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Մարինե Սահակյանը:

Ինչպես տեղեկացրեց Մարտունու թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն Անժելա Պողոսյանը, նախագծային աշխատանքը նվիրված էր հայ մեծ քնարերգու Հովհաննես Շիրազի կյանքին ու ստեղծագործական ուղուն: Այն կրում էր «Ուրախ եւ տխուր Շիրազը» խորագիրը, քանի որ վարպետի կյանքը լի էր եւ՛ լուսավոր ժպիտներով, եւ՛ խորը ցավերով, եւ նրա կյանքն ու ստեղծագործությունը հենց այդ երկու հակադիր բեւեռների միահյուսումն էին:

-Բոլորս Հովհաննես Շիրազին գիտենք որպես «ուրախ» Շիրազ, ում սրամտությունն ու գյումրեցի Օնիկին բնորոշ հումորը լեգենդներ են դարձել: Նա կարող էր դիպուկ պատասխանել ցանկացած խմբագրի կամ պաշտոնյայի: Նա հպարտ էր, գիտեր իր տաղանդի ուժը եւ Արագած լեռան պես վեհ էր իր ինքնագնահատականի մեջ: Սակայն այս ամենի թիկունքում թաքնված էր «տխուր» Շիրազը՝ որբանոցի դաժան պայմաններով անցած, հորը վաղ կորցրած եւ աղքատության մեջ մեծացած պատանին: Նրա ամենամեծ տխրությունը սակայն «գերի Մասիսն» էր, որը նա պատգամեց իր որդուն՝ տուն բերել», -նշեց դպրոցի տնօրենը:

Ուսումնական նախագծի շրջանակներում սովորողներն ուսումնասիրել են Հովհաննես Շիրազի բարդ ու բազմաշերտ կյանքի ուղին՝ սկսած Գյումրու որբանոցային տարիներից մինչեւ համազգային ճանաչում: Հետազոտությունն ընդգրկել է նրա թե՛ «ուրախ» կողմը՝ սրամտությունն ու հումորը, եւ թե՛ «տխուր» կողմը՝ զրկանքներն ու հալածանքները:

Ուսումնական նախագիծն իրականացվել է փուլերով, որի ընթացքում աշակերտներն ուսումնասիրել են Հովհաննես Շիրազի կենսագրությունը եւ ապրած ժամանակաշրջանը, ծանոթացել Հովհաննես Շիրազի գրական մականվան պատմությանը, Հովհաննես Շիրազի տուն-թանգարանի եւ հուշարձանի կառուցման մանրամասներին, վերլուծել մեծ բանաստեղծի վերջին պատգամը, քննարկել Հովհաննես Շիրազի եւ Սիլվա Կապուտիկյանի, Հովհաննես Շիրազի եւ Շուշանիկի ամուսնական կյանքի մանրամասները, ուսումնասիրել նրանց զավակների կյանքը:

Նախագծի իրականացման ընթացքում սովորողները ձեռք են բերել եւ զարգացրել հետազոտական ու վերլուծական մի շարք առանցքային հմտություններ: Սովորողները սովորել են ինքնուրույն գտնել եւ օգտագործել տեղեկատվության տարբեր աղբյուրներ: Նրանք ձեռք են բերել տեղեկություններ հավաքագրելու, դրանք համակարգելու եւ սեփական տեսակետն արտահայտող նյութեր ստեղծելու հմտություններ: Սովորողները կատարել են աղբյուրների ուսումնասիրություն, հարցազրույցների վարում եւ տեղեկատվության հավաքագրում: Կարողացել են զատել Շիրազի կյանքի հակադիր բեւեռները՝ հումորն ու դրաման:

-Ուսումնական նախագծի արդյունքում ներկայացվեց սահիկաշար, որն իր մեջ ամփոփում էր բանաստեղծի կյանքի ուղին ու լուսանկարները, տեսահոլովակ, որտեղ Հովհաննես Շիրազը բացահայտվեց ուսուցիչների աչքերով, տեսանյութ, որտեղ արհեստական բանականության շնորհիվ նոր շունչ էր տրվել անմահ բանաստեղծին, եւ թեմատիկ բուկլետներ, որոնք ամփոփ ներկայացնում էին նախագծի հիմնական բացահայտումները: Նախագծային աշխատանքի ավարտին կատարվեց հանրային ներկայացում, որի ժամանակ մասնակից աշակերտները եւ բոլոր հյուրերը միասին քայլեցին Շիրազի «վարդերով ու շուշաններով» լի աշխարհով, որտեղ յուրաքանչյուր տողի մեջ հայոց լեզուն է եւ մեր ազգային իղձը,- եզրափակեց Անժելա Պողոսյանը:

**Խոսրով Խլղաթյան**

6.qxd 29/03/2026 17:48 Page 7



## ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱՌԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

/սկիզբը՝ ախորդ համարներում/

Ալխոն գյուղի բոլոր ճանապարհները լավ գիտի, իրեն երբեմն ճանապարհ տարած ժամանակավոր տերերի հասցեները նույնպես, նա անգիր է արել նաեւ Ղազախի ճամփան՝ արահետ առ արահետ, բարձունք առ բարձունք: Ալխոն ապրում է բեռնաձիու աշխատասիրությամբ, տոկունությամբ, երբեմն՝ ինքնասպառումով, սակայն լուռ ներողամտությամբ. «Լկամը պատռեց բերանը, վիզը ոլորեց ու գլուխը թեքեց, եւ Ալխոն հիմա այդպես էր գնում սարերի արահետով»:

Հայ գյուղացու համար, որին ազնվացնողը նրա չարքաշ աշխատանքն է, աշխարհում իր չարչարանքով վաստակած արդյունքից ավելի վստահելի բան չկա: Նրա գիտակցությանը խորթ է պետության միջամտությունը, վերջինիս ստեղծած արտադրանքը՝ զարգացող տնտեսության ճանապարհին: Եթե դա հաց է, ապա հացի նման չէ, եթե ցորեն է՝ այն որակը չունի. «...Միայն Օմակուտի հացն է պակաս: Պետակա՞նը, պետականը, դե ճիշտ է, ցորեն է, ալյուր է, բայց դե եսի՞մ՝ ցորեն է, ալյուր է»,-դժգոհելով ղազախեցի Սիմոնի տանը «արեւի ուժ» ունեցող հաց է կիսում Գիքորը: Օմակուտի հացը սկսել են թխել գործարանում, ինչը նշանակում է, որ դա այլեւս գյուղացու արդար ձեռքի ստեղծածը չէ, մյուս կողմից էլ՝ առուծախի առարկա է՝ նոր ու անծանոթ մի երեւույթ: Բայց դա էլ բոլորը չէ. «Հացն ստեղծվում է մեծ Սովետական Միության մեջ որեւէ մի տեղ,- ասում է Հ. Մաթեւոսյանը,- եւ Դսեղի կարկուտը եւ Շիրակի երաշտը այսօրվա դսեղեցուն եւ այսօրվա շիրակեցուն չեն վերաբերում, քանի որ կարկուտն ու երաշտը չեն խփում այն արտին, որը պետք է լիներ հողի եւ գյուղացու փոխադարձ սիրո եւ փոխկապվածության արդյունքը...»: Հողը, որը սիրվել է գյուղացու կողմից, որի նկատմամբ մշակողի հոգատարությունն ու գորովանքը ազգային մշակույթի մի մասն է եղել, այժմ գյուղացու ափերից փոխանցվել է պետական ձեռքերին, եւ դրանով իսկ գյուղացին զրկվել է կարեւոր մի բանից՝ ավանդաբար ժառանգվող եւ բնության օժանդակությամբ իրականացվող աշխատանքից: Սա խոսում է մարդու ավանդական կացութաձեւի փոփոխության մասին, որը գուցե հարմարավետ է, սակայն խորթ է օմակուտցիներին:

Առաջին անգամը չէ, որ Գիքորը Ղազախում է, բայց առաջին անգամն է, որ նկատում է՝ մոտոցիկլի վրայից երիտասարդը ձեռքը երկարում, կատակով, թե անամոթաբար զարկում է դեռատի աղջկա հետույքին, ու երկուսն էլ շարունակում են իրենց ճանապարհը, ու երկուսն էլ չեն ամաչում: Ղազախեցիները «չունեն քաղաքի կարգուկանոնը կամ փոքր գյուղերի տնավար առատությունը», իսկ «կլուբների» առաջ մեծ փորերով տղամարդիկ են կանգնում, ինչը նշանակում է, որ նրանք հունձ չեն անում: Մի բան ընդհանուր է՝ տղամարդիկ, ինչպես Օմակուտում է ընդունված, նարդի են խաղում: Սակայն, երբ անձրեւ է գալիս, առաջինը նարդին են հավաքում, մինչդեռ՝ «Օմակուտ անձրեւն սկսվում է փչացող խոտի տագնապով»:

Գիքորը տարակուսանքով լսում եւ ցավով արձանագրում է, որ Սիմոնը կով չունի եւ չի էլ ցանկանում ունենալ՝ «ինչի՞ս է պետք»: Որպես մեխանիզատոր է աշխատում, տան վրա երկրորդ հարկ է գցել եւ հանգիստ ապրում է:

Գիքորի սրտին ծանրանում են նաեւ Սիմոնի որդու անունը՝ Մակբեթի, կապույտ ու սառը աչքերը, օտարոտի վերաբերմունքը, որին ինքն արժանանում է պատերազմի տարիներին իր հացով սնված ընտանիքում: Շունը կծել է Ալխոյի վիզը եւ պետք է եռացրած ջրով լվանալ, իսկ ջուրը շարունակ ուշանում է: Երեխան ուղղակի հայտնում է, որ Գիքորը ջուր չի խնդրել: «Եվ ինքը հասկացավ, որ միակ մտերիմն այդտեղ Ալխոն է»: Սիմոնը ոչ այն է՝ անտեղյակ, ոչ այն է՝ անտարբեր է երեխաների նկատմամբ: Գոհ է, որ իրենից հաց չեն ուզում, իրենք իրենց համար են ու դեռ ավելին՝ իրենք գիտեն՝ իրենց գործերը:

«Մարդը հեռանում է աշխատանքից, դրա արդյունքից: Օտարումը տարածվում է եւ ընտանեկան հարաբերությունների վրա, քանի որ հացի արարման ընթացքին ընտանիքի անդամները մասնակցություն չեն բերում»,-իրավացիորեն ընդգծում է Վ. Գրիգորյանը:

Գիքորի սիրտը կրծող ցավերը բազմաթիվ են, սակայն ազնիվ, ներփակ եւ դատարկվող գյուղի ցավերը բոլորին են վերաբերում: Գիքորն առանձնապես վրդովված է որդու՝ Հենրիկի վարքի, ապրելակերպի պատճառով: «Ահա, հնձվորն աղբյուրի գլխին գերանդի է քաշում, կանայք աղբյուրի տակ խոտ են դիզում, եղա՞վ, եկել նստել եք մեջները, տաշի-տուշի»: Մտովի կռիվը հարազատ որդու հետ այն բանի համար է, որ Հենրիկը ծերունազարդ հորը, կնոջն ու զավակներին թողել է գյուղում, ինքը տեղափոխվել է Կիրովական, ապրում եւ աշխատում է այնտեղ, իսկ Օմակուտ գալիս է ամռանը՝ ընկերների հետ կերուխում անելու: Օմակուտի մասին հիշում է մեկ էլ, երբ իրեն գյուղի բարիքներն են պետք եւ այն էլ հարկ չի համարում անձամբ տանել, երբ քաղաք մեքենա կգնա, թող հայրը բեռնի, ուղարկի: Հոր ներողամիտ սիրտը հանդարտվում է, մշակում, հավաքում ու բեռնում է, սակայն ուղարկելուց հետո կրկին զայրույթով է լցվում: Ամիսներ ի վեր լուր է ուղարկում որդուն, որպեսզի մթերքի դատարկ պարկերը ետ ուղարկի՝ ապարդյուն:

Գիքորին ցավ է պատճառում որդու բարոյական անկումը: Որդու հետ գյուղ եկող քարտուղարուհու ոտքերը երկար են, իսկ իր հարսը «անճկուն գյուղացի» է: Որդին հոր մասին հիշում է գառը բաստուրմա դնելու, ընկերներին մաքուր կապույտ օդի հյուրասիրելու ժամանակ, իսկ խորոված սեղանին դրվելուց հետո մոռանում է նրա գոյության մասին եւ անգամ հանուն հոր ներողամտության՝ կենացը չի խմում: Ժամանակ առ ժամանակ աչքերը ոլորում է կնոջ վրա, որը լուռ համեստությամբ Գիքոր հայրիկի հետ խորոված է հասցնում սեղանին: Գիքորը տեսել է, թե հարսի կոկորդն ինչպես է ուռչում նման դեպքերում: Հարսն աչքի է ընկնում հնազանդությամբ, բարեվարքությամբ. «...Նա երեք երեխա է ծնել, նրա երեխաների վրա մի ծուռ տեղ չկա, նրա տունը փայլեցրած է, հնազանդ, նա եթե չի էլ սիրվում՝ հլու սիրում է, նա տան կին է, իսկ լրբերը լինում են հատուկ տեսակի»:

Վիպակում աչքի են զարնում քաղաքի ծնած դառնությունները. նոր սերունդը հեռանալով գյուղից, հեռանում է իր բարոյական նկարագրից, իր մեջ դաստիարակված մարդկային որակներից, ներքին կարգապահությունից, ավագ սերնդի կողմից իրեն փոխանցված նորմերից: Քաղաքն իրենով է անում նոր սերնդին, ինչի հետեւանքով գյուղը կորցնում է իր հողը փայփայողին՝ վարողին, ցանողին, հերկողին, կյանքն այլեւս չի զարգանում խոտի դեզի ստվերում, ինչպես նախկինում: Գնացողները ետ չեն գալիս, նրանց սիրտն այլեւս չի ցավում մնացողների համար:

Նեղ, անձնական հարաբերությունների ֆոնին տեսանելի է Գիքորի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի բացակայությունը, ինչը վկայում է նոր ժամանակներում հայր ու որդի հարաբերությունների խաթարման, ծնողների, ավագների նկատմամբ հարգանքի, գնահատանքի, մեծարանքի բացակայության, որդիական պարտականությունները չկատարելու մասին: Նկատվում է նաեւ երեւույթի հակառակ եւ ոչ պակաս անցանկալի դրսեւորումը. հայրերը չեն հետաքրքրվում իրենց զավակներով, նրանց նիստուկացով, մեծերի նկատմամբ վերաբերմունքով, նրանց հետաքրքրություններով, ապագայով: Ընդհանուր փոխհարաբերությունների մեջ օրեցօր պակասում է պարզությունը, բարեկամությունը, սրտաբացությունը, երախտագիտության զգացումը նույնիսկ երբեմնի ստնտուի նկատմամբ: Խոսքը այնպիսի արատավոր երեւույթների մասին է, որոնք բույն են դրել փոքրիկ, աննկատ գյուղաքաղաքներում ու քաղաքներում՝ նոր ժամանակներ թեւակոխելու, սոցիալ-տնտեսական տեղաշարժերի եւ այլ հանգամանքների հետեւանքով:

Գյուղն ազնիվ է ինքն իր հետ, պահպանողական ու հետեւողական է իր բարոյական կերպարի նկատմամբ («Օգոստոս»): Նրանք, ովքեր երբեւէ ինչ-որ դիպվածով շեղվում են ընդունված բարոյական նորմերից, արժանանում են համարժեք վերաբերմունքի. «...Մարիամի գլխաշորը հանեց՝ որ չպատռվի, բռնեց բոլոր մազերը միանգամից՝ որ փունջը փոքր չլինի ու չպոկոտվի, ու խփեց ուսերին, կրծքերին, փորին, մեջքին, քամակին: Հետո գլուխը կռացրեց ու խփեց միայն մեջքին, մեջքին, մեջքին՝ որպեսզի եւ ցա՛վը լինի, եւ կապտուցք չլինի»:

Աշխենի այս դասը Մարիամին է ուղղված՝ իր ընկերուհուն, որի ամուսինը զոհվել է ռազմաճակատում, երբ Մարիամն ընդամենը քսան տարեկան է եղել: Կյանքը բեռ է դարձել Մարիամի փխրուն ուսերին՝ իր ու երկու դստեր ապրուստի միջոցները, անտղամարդ տունը, հասարակության աչքը, իր երիտասարդությունը: Մարիամը, մեծ դստերն ամուսնացնելուց հետո ապրում է փոքրի հետ՝ ազնիվ աշխատանքով, ծանրաբեռ եւ խաղաղ տանջանքով: «Հասարակությունը նրան զրկել է ամեն կարգի առավելություններից, - նկատում է Վ. Գրիգորյանը,- կյանքը նրան վերածել է բեռնաձիու՝ հոգսաքաշի, որի համար ապրելը գոյության կռիվ է, հացի համար պայքարը՝ ամենօրյա, չընդհատվող աշխատանք»:

Մի երեկո Մարիամն իր սայլը տվել է Անդրոյին՝ սարքելու, հետո նրան թույլ է տվել ստուգել իր թախտի ամրությունը, իսկ Անդրոն չի ցանկացել ետ դառնալ, քանի որ «կյանքը կարճ է», իսկ Մարիամը փռի պես տաք է: Անդրոն հարցրել է, թե «անմարդ շա՞տ է դժվար» եւ այդ արել է խղճահարված, մարդկայնորեն:

Մարիամը գյուղական հոգսին սովոր կին է, եւ նրա աչքը ո՛չ ուրիշի կյանքին, ո՛չ էլ նրա ունեցածին է, պարզապես նա «անօգնական է»: Նա բավարար համարձակություն չունի անգամ ծառից ընկած պտուղը առանց թույլտվության վերցնելու, քանի որ դա ուրիշի այգու պտուղն է: «Կարելի՞ է տանձ վերցնել,-տանձենին կքվել էր բերքի առատությունից,-տո հիմա՛ր... հրեդ բերանդ է մտնում, վերեւից քաղիր, էլի՛»:

Աշխենը լավ է գիտակցում, որ անամոթ ու անպատկառ կնոջ հետ չէ, որ գործ է ունեցել իր Անդրոն, սակայն նա չափված ու գծված կյանքով է ապրում: Ֆերմայում ամենաշատը իր հանձնած կաթն է, ամենամաքուրը իր մաքրած հորթանոցներն ու հորթերն են: Աշխատում է լի ու լի էներգիայով, շարժվում է աշխույժ: Մարդկանց հետ առնչվում է խոնարհությամբ, մի քիչ էլ ամոթխածությամբ, գործն ավարտելուց հետո անգամ ոտքը ֆերմայից դուրս չի դնում, մինչեւ ֆերմայի վարիչ Լեւոն քեռին չտա իր համաձայնությունը: Անդրոն հայտնվում է ուշ, ասես խոտի մասին չի մտածում, առջեւում ձմեռ չկա, ,տաշած քարի է ման գալիս, որ մտնի տակը: Հատկապես այս վերջին հանգամանքը Աշխենին էլ, Անդրոյին էլ դուրս է մղում ընդունված կարգուկանոնից, եւ ստիպում է, որ Աշխենի կուրծքը ուռչի խանդից:

Աշխենը, քեռի Լեւոնի առաջ, ամոթխածի իր կերպարով, կնոջ խոցված ինքնասիրությունը թաքցրած, թվում է՝ իսկապես հնձվորին մածուն տանելու է գնում: Բայց՝ ոչ: Աշխենը գնում է պարպելու իր միջի զայրույթը, որ առաջացել է մի քիչ չիրականացած ցանկությունների, մի քիչ Անդրոյի ապրած փափուկ կյանքի, եւ հատկապես իր ու Անդրոյի համեստ երջանկությունն անխաթար պահելու մղումով: Բայց այդ զայրույթի միջից դեռ կարեկցում է Մարիամին. «Հետո ջուր խմեցրեց Աշխենը Մարիամին, իր սանրը տվեց մազերը սանրելու, կապեց նրա գլխաշորը եւ դույլերն ինքը վերցրեց, որովհետեւ Մարիամը ոտքի վրա դժվար էր մնում»:

Անդրոն կիսով չափ սիրում, կիսով չափ էլ խղճում է Մարիամին՝ «շալակով խոտ չբերես, քեզ մի՛ սպանիր, Մարիամ»: Աշխենի լիքը-լիքը մարմնին, երկար-երկար լեզվին երբեմն նայում է անտարբերությամբ, երբեմն հաճույքով ու դրա հետ էլ զարմանում է, թե մեկ-մեկ ո՞ւր է կորչում Աշխենի երկար լեզուն:

Այս բոլորը գյուղի ներսում է, գյուղաշխարհի հոգու մեջ եւ այդ աշխարհն իր մեծ ու փոքրով այնքան կենսունակ է, որ մարդու մահից հետո անգամ ամեն բան նրան է հիշեցնում. նայում ես ձորին, եւ հիշում ես, որ հայրդ մի օր նստած է եղել ձորի բերանին, ձեռքդ մեկնում ես գործին եւ հիշում ես, որ մի օր այդ գործում հայրդ է օգնել քեզ. «Բա ես ի՞նչ անեմ՝ կացինս, կոթ չունի»,-ասել է ինքը: «Սարքե՛մ, քեզ մատաղ,- պատասխանել է հայրը»:

Հայրը սարքել է եւ այնպես է սարքել, որ գյուղի դարբինը ճանաչել է նրա ձեռքի գործը: Կացնի կոթը սարքվել է մի հացենու փայտից, որը դեռ հոր կյանքի օրոք այլեւս չկար, իսկ «ապակիով, կոշտ շորով, ափով հղկված» հոր սարքած կացնի կոթը դեռ կա:

**/շարունակելի/**

**Ռուզան Վարդանյան**

6.qxd 29/03/2026 17:48 Page 8



## ԽԱՉԱՂԲՅՈՒՐՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Խաչաղբյուր գյուղում ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում 2025 թվականի հուլիսից սկսվել եւ ընթանում են 75 տեղանոց մանկապարտեզի նոր շենքի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Խաչաղբյուրի մանկապարտեզի նոր շենքի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 590 միլիոն 733 հազար դրամ, որն ամբողջովին հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

2026 թվականի մարտի 27-ի դրությամբ կառուցված են շենքի երկու հարկերը, տանիքը, տեղադրված են լուսամուտները, ընթանում են ներսի հարդարման ու այլ կարգի աշխատանքները: Շինարարական աշխատանքներն իրականացված են ավելի քան 60 տոկոսով: Շինարարությունը նախատեսվում է ավարտել 2026 թվականի դեկտեմբերին:

**«Գեղամա աշխարհ»**

## ՀԱՅԴՈՒԿ ԼՈՐԹՈՆ

Հարություն էր անունը, բայց Լորթո գիտեին ամենքը:

1904-ին էր, երբ առաջին անգամ հանդիպեցի անոր Վանի մեջ:

Նալպանտ Նշանի խումբին ամենեն տարեցն էր, արհեստով մսագործ: Կը մոտենար 60-ի: Աչքիս զարկավ անոր լայնալանջ ըմբիշի կազմվածքը եւ մորուքի կողերուն հետ ծուլված իր ահագին պեխերը: Ամչկոտ եւ չխոսկան էր: Երբեմն միայն մեկ-երկու հեգնախառն կատակ եւ մանկական անուշ կարճ ծիծաղ մը: Փորձեցի խոսեցնել.օձիքը ազատեց՝ փնթփնթալով.

-Ես պեան չեմ կիտէ, էնա Նշանին խարցու, էնա ու Վահանը կրեապառ (գրաբար) պաներէն կը խասկնան, իմ խելքը չի խասնի....

Գրագետ չէր, բայց փիլիսոփա մըն էր: Իր անխախտ կարծիքներն ուներ աշխարհի չարի ու բարիի մասին: Ոչնչի չէր զարմանար, ոչնչեն չէր զայրանար:Երբ իր ընկերներու հետ էր, ավելի համարձակ էր ու դյուրահաղորդ: Կ'ըսէր անոնց, երբ կը գանգատեին կյանքեն.

-Ապա ինչխ գիտես, կեանքը կո էսայի, կ'ուզես՝ խավնի (հավանի),կ'ուզես մի խավնի: Նպատակ որ չունենաս,գէշ ի. եա էշ, եա դու: Մարդ ասածդ Աստված ստեղծիր ի, որ պեանիմ պետք կեայ, թէ չէ տավարի պէս կեանքէն պեան չես խասկնա. եա կաս, եա չկաս...

Վասպուրականին մեջ դաշնակցության մուտքին առաջին օրեն իսկ Լորթոն հեղափոխական դարձած էր: Պետոյի, Դումանի, Վարդանի եւ Վազգենի հավատարիմ թիկնապահն ու զինակիցն էր եղած, մասնակցած էր հազար ու մեկ կռիվներու:

Իր ընկերները կը դրդեին, որ պատմել տամ Պողազ-Քեասանա՝ Դումանի խմբի կռիվը: Օր մը, երբ քեֆը տեղն էր,պատմեց.

-Շտէ, ես ի՞նչ գիտեմ, կեօ Պաշկալանայ ետեւէն զարկենք Չուխա Կիատուկ ու ընցանք սահմանը, մտանք Դէրիկա վանք: Կաթ, մածուն, սեր պօլ իր, քէֆ քեաշինք, ամա առտուն տաճիկ ասկեար ու աշիրաթներ պաշարեցին մզի... Զարկինք, զարկվանք, ճար չկար, ահագին բոլուկ էր, մենք երսուն հօգի, ի՞նչ կանանք անենք....Դուման ըսաց. «Չէ, մենք իսոնց վրէն չենք կանայ, պիտի ինչխ էլնի, տյուս գանք: Իրիկուն որ ելավ, մենք հանկարծակի տուշմնին մեր թֆընքներու առջեւ տվինք, փախան, ճամփախ պացին, մենք էլ աջ ու ձախ կրակելով զարկինք սար...

Համա պարոն Նիկօլը չէր կանա քելէ, խիվանդ էր: Խօ չենք թողայ դուշմընին: Դե,դե, պարոն Նիկօլ, ջանիդ մեռնեմ, քիչ մըն էլ զօռ տուր, խասնենք սարի ծէր: Էնտուց դեն վտանգ չկա, ասինք: Խեղճ պարոն Դումանը զօռ արեց: Համա էս անգամ ըսկի չէր կանէ քելէ: Խումբը ետ մնաց: Տղէներ չեն գիտե, ինչ ընեն, լույսն էլ կը պացվէր: Ասի, եալլա, պարոն Նիկօլ, վալլահ, քե պիտի շլկեմ-տանեմ: Պ. Նիկօլ ասաց. «Չէ, Լորթօ, չես կանայ, շատ ծանր եմ», ասի՝ դու մառախ մի անէ, ես քէ կը տանեմ..Ելի վեր ուսերացս. Պզտիկ ճժի պէս առի շալակս:Համա ղօրթ շատ ծանր էր, նիհար էր, համա խաստ ոսկոր էր օղորմած հոգին:

Ցավն էն էր, որ կը հետապնդէին մեզ, ես էլ զօրով կը քէլի: Աստված կյանք տայ մըր տղոց, գյուլլի տակ առին քրդերը ու պաշտպանեցին մեզ: Էլ ի՞նչ գլուխդ ցավցնեմ: Կեօ ըսկնայ...Երկու սհաթէն խասանք Սալմաստ:

-Չը հոգնեցի՞ր այդպէս երկու ժամ բեռդ տանելով:

-Ապա չէէէ... ամա պարոն Դումանն էր շլկիս, չէ՞...Մէկ- երկու ամիս փորիս տակ մի քիչ ուռավ, ամա հիմի էլ պեան չկայ...

***

Լորթոյին վիճակվեցավ քովս գալ Կովկասի հայ թաքարական կռիվներու ատեն, երբ Հին Նախիջեւանի պաշտպանության գործը մեզ էր հանձնված (Վանի Սարգսին, դաշնակցական Խէչոյին եւ ինծի):Ճիշտ ժամանակին վտանգներու միջեն հասավ մեր քով: Փորձառու եւ վստահելի զինվորներու պետք ունեինք:

Լորթոյին ուղարկեցինք Զնաբերդ գյուղի պաշտպանության գործը ստանձնելու: Պաշտոնաթող գեներալ եղած թաքար բեկի մը հայաբնակ գյուղն էր: Բէկի քարաշէն տունը գյուղի մեջն էր, բայց այդ օրերուն, թերեւս, վախեն գյուղեն հեռացած էր, բայց իր մարդկանցով շարունակ հարձակման կենթարկէր գյուղը:

Լորթոն տեղացիներեն տեղական եւ թռուցիկ խումբեր պատրաստեց, որոնք շարունակ ետ կը մղեին թշնամին: Օր մըն ալ Լորթոն թակարդի մեջ կը ձգե բեկին իր մարդկանցով, լավ ջարդ մը կուտա, բայց բեկը կը հաջողի ազատիլ իր վերարկուն ձգելով:

Լորթոյին կանչեցինք զեկուցելու այդ դեպքը:Նա վեհափառորէն ներս մտավ մեր շտաբը...Գեներալի փառավոր վերարկուովը (Մոխրագույն, աստառը կարմիր ու ոսկե կոճակներով) եւ իր ահագին փափախովը: Չը գիտեինք՝ խնդանք, թե բարկանանք:

-Աս ինչ մասխարութիւն է, Լորթո,-բարկացա ես:

-Ի՞նչ մասխարութիւն, պարօն,-եւ հայացքիս հետեւելով նկատեց,որ խօսքը գեներալական վերարկուի մասին է: Ժպտաց, արհամարական արտահայտութիւն ընդունեց:

-Էսա պալտոյի մասի՞ն ի...Վեալլահ, շատ խորոտ պեան ի, ինչու՞ էն սատկած թուրքը կը խակնի՝ մասխարա չի, ես մասխարա՞ իմ....

Ապա մեզմե ապահովված, նա գործե ազատ ատեն այդ հագուստով կը կանգներ եկեղեցիի դուռը, թեւերը ետին ու սրախոսություններ կը նետեր ծանոթ հայերուն: Սիրելի էր ամենուն իր պարզամտությամբ, կենսուրախ բարեմիտ հեգնանքներու, մանավանդ իր պատրաստակամության համար:

Նախիջեւան քաղաքը եւս ունէր իր հին թաթարական ավատական ընտանիքները՝ Նախիջեւանի խաները: Ատոնցմե հայտնի էր Ռահիմ խանը՝ ճարպոտ խոշոր թուրք մը, որ միշտ քանի մը թիկնապահ ետեւը ձգած, չերքեսկիով կը պտտեր: Ռայիմ խանն էր, ով թաթարական մարտական ուժերուն մեջ մեծ հեղինակություն ուներ ամբողջ գավառի թաթարներու վրա:

Այնպես պատահեցավ, որ մեզի տրամադրված տուներուն մեկի ետեւի մասը շինված լիներ Ռահիմ խանի այգիին ծայրը: Այդտեղեն կերեւար խանի միահարկ տան պատշգամբը, որ նա սովորություն ուներ երբեմն նստիլ եւ դայլան քաշել՝առանց մեզմե կասկածելու:

Մտածեցինք՝ սպաննել խանը:Պատին մեջ ծակ մը բանալ եւ հոնկե գնդակահարել:Դաշնակցական Խէչոն գաղտնապահ տղա մը գտավ, եւ ծակը բացվեցավ: Տեռորի գործը Լորթոյին հանձնվեցավ՝ իբրեւ հին լավ նշանառու:

Լորթոյին գաղտնապահ ըսինք մեր մտադրությունը՝առանց պարագաները հայտնելու: Վերջին րոպէին միայն Խէչոն տարած էր նրան ծակին մօտ եւ 5-6 սանտիմետր տրամագծով ծակեն ցույց տված էր խանի պատշգամբը՝պատվիրելով նստել ծակին քով եւ զարնել, երբ խանը երեւնար հոն: Լորթոն հանկարծակի եկած էր, շվարած դիտած էր ծակեն, հարցական նայած էր Խէչոյին եւ հարցուցած հեգնանքով.

-Էս ա պզտիկ ծակէ՞ն պիտի զարկեմ:

-Այո, իհարկե:

Լորթոն պահ մը լռելեն վերջ խիստ դեմք մը առած ըսել էր.

-Չէ,պարոն Խէչօ, էտ իմ բանը չէ, Լորթօն այսպիսի բան չի անի, դապուլ չի (չի ընդունվիր), որ դուշմընին ետեւէն զարնի, ծակեն զարնի...Վալլահ էտա նամարդություն ի...էտա իմ բան չի...Ասեք զարնեմ ինոր , երբ ձիով փողոց կ'ելնի, մտնեմ տուն ու զարնեմ...համա ճակատ-ճակատի...

-Ի՞նչ հիմար բաներ կը խոսիս,-բարկացած էր Խէչոյի թիկնապահ ընկերը:

-Ինչու՞ հիմար ի, գնա դու զարկ, որ լավ բան ի: Կուզէք պատժեք զիս,զինաթափ արեք, ամա ետեւէն մարդ չեմ կրնա զարկի:

Այսպես էր Լորթոն: Նա ուներ յուրահատուկ բարոյական հասկացութիյներ:

***

Երկար տարիներե հետո վերջին անգամ տեսա անոր Երեւանի մեջ, երբ Հայաստանը անկախ էր:

1920 թվականին էր, գարուն: Երջանիկ էր Հայաստանը իր անկախությամբ, թեեւ թշվառ ու ուժասպառ: Սեւրի դաշնագրի վավերացման կսպասեինք ամենքս: Կառավարության որոշմամբ Փարիզ պիտի երթայի միանալու Ահարոնյանի պատվիրակության: Մեկնումես քանի մը օր առաջ այցելության եկավ ինծի մեր Լորթոն: Իմ խանդավառութիւնը ուզեցի կիսել Լորթոյի հետ:

-է, Լորթո, ի՞նչ կըսես հիմա, կը տեսնես, որ զուր արյուն չը թափեցինք՝ հայ զորք կունենանք այսուհետ,զենք կունենանք, թնդանոթ...

-Խա, էտա սկուն ի (այդպէս), ամա էսա երկու տարի ի խելք կ'անիմ, կը նայիմ չորս կողմս ու չեմ խասկնա՝ վո՞վ ի էս երկրի մեծը...մաճլիս կա ,կը տեսնամ քե, մեր Սարգիսի կնիկը (Տիկին Պերճուհի պարլամենտի անդամ), մեր Մալխասը, բոլորդ նստուկ իք մաճլիս, ամա որ Հայաստանը կասիս անկախ ի, ապա ու՞ր է մեր թագավորը...առանց թագավորի վէո՞վ է տեսէ ազատություն...

Հեգնական ժպիտով նայեց ինձ:

-Չէ Լորթո, մենք առանց թագավոր պիտի կառավարենք մեր Հայաստանը, Հայաստանը հանրապետական է:

-Ի՞նչխ Հայրապետական:

Քիչ մտմտաց, ապա ավելացրեց.

-Կաթողիկո՞սն է անկախության մեծ... Պօշ պեանի...խազար խազար տարի մնա, մեր ազգը չընդունի Հայրապետ...չուր օծեալ թագավոր չլինի, խէր չկայ...դատարկ բան ի... Դու կասես՝ նախագահ պիտի ըլլայ, բա վէո՞վ պիտի շինենք նախագահ...

-Օրինակ՝Քաջազունին, Հայր Աբրահամը...

-էդ ա չեղավ, հայ հու... Ինոնք ե՞րբ կռվան, ե՞րբ արուն թափեցին, որ նախագահ ընտրեն...Վալլահ, կապուլ չենք ընի... Ինչու՞ Անդրանիկ, պարոն Արամ չեք ընտրի...

-Հանգիստ եղիր, Լորթո, մենք չենք թողնի գեշ կառավարեն...

-Այ, էտա լավ, էտ աղէկ ի: Իմ ջան ղուրպան կանեմ Հայաստանին...

Կը սիրեր երգը...Ինքը մեղմանուշ ձայն մը ուներ եւ գիտեր երգ մը միայն.

Նպատակիս հասնեմ միայն,
Թող զիս հանեն կախաղան....

...Մեռավ 1927-ին, Սալմաստի մէջ՝ բնական մահով:

Մեռնելու ատեն բաղձանք մը ունեցավ. թաղվել պայքարի իր մեկ ընկերոջ քովիկը: Ընկերները կատարեցին անոր վերջին փափաքը:

Հաֆթուան գյուղի եկեղեցու գավիթին մեկ անկիւնը:

Անշուք գերեզմանը եղավ անոր միակ սեփականությունը այս ավեր աշխարհին մէջ:

**Վահան Փափազյան**

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 27. 03. 2026 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: